

## ԿԱՐԾԻՔ

### ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Քրիստինա Արայի Մարգարյանի «Ուսանողների մասնագիտական խոսքային կոմպետենցիայի ձևավորումը տեխնիկական ԲՈՒՀ-ում ռուսաց լեզվի ուսուցման գործընթացում» թեմայով ատենախոսական հետազոտության շուրջ՝ ներկայացված «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (ռուսաց լեզու)» 13.00.02 մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու նպատակով

Ք. Ա. Մարգարյանի ատենախոսությունը նվիրված է տեխնիկական ԲՈՒՀ-ում մասնագիտական խոսքային կոմպետենցիայի ձևավորման խնդրին: Ռուսաց՝ որպես օտար լեզվի դասավանդման ժամանակակից մեթոդիկան ունի հարուստ փորձ՝ ռուսաց՝ որպես օտար լեզվի դասերի ժամանակ մասնագիտական տեքստերի օգտագործման հարցում: Ընտրության չափանիշ են հանդիսանում տեքստերի ծավալը և խնդրային ուղղվածությունը, ուսուցանվողների լեզվական կոմպետենցիայի մակարդակի համապատասխանումը և այլն:

Տվյալ հետազոտության շրջանակներում առաջարկվում են տեխնիկական ԲՈՒՀ-ում հայ ուսանողներին ռուսաց լեզու դասավանդելիս մասնագիտական ուղղվածությամբ տեքստեր օգտագործելու նոր հնարավորություններ: Ժամանակակից փուլում սա հանդիսանում է լեզվական կրթության մասնագիտացմանն ուղղված ռուսաց՝ որպես օտար լեզվի դասավանդման մեթոդիկայի արդիական խնդիրներից մեկը:

Ատենախոսական հետազոտության ավանդական շարադրանքը թույլ է տվել Քրիստինա Մարգարյանին տրամաբանորեն հիմնավորված ձևաչափով ներկայացնել տեխնիկական ԲՈՒՀ-երի ուսանողների մոտ մասնագիտական խոսքային կոմպետենցիայի ձևավորման հեղինակային համակարգը:

Գրախոսվող հետազոտությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնցից յուրաքանչյուրն ավարտվում է հիմնավորված եզրահանգումներով, եզրակացությունից, գրականության ցանկից (140 անվանում) և վեց հավելվածից: Հայ ուսանողների խոսքային կոմպետենցիայի ձևավորման հեղինակային հայեցակարգի մշակման ժամանակ հայցորդը գրագիտորեն կիրառել է հետազոտության տեսական, վիճակագրական և էմպիրիկ մեթոդներ:

Ներածության մեջ նշված է աշխատանքի՝ որևէ կասկած չհարուցող արդիականությունը, ներկայացված են հետազոտության ճշգրիտ կերպով ձևակերպված օբյեկտն ու առարկան: Նշված խնդիրների լուծումը նպաստել է սահմանված նպատակին հասնելուն:

Հետազոտության վարկածը հիմնված է այն դրույթի վրա, որ ռուսաց՝ որպես օտար լեզվի բուհական մասնագիտական ուղղվածությամբ կրթության գործընթացի արդյունավետությանը հնարավոր է հասնել լեզվական ու սոցիոլեզվական կոմպետենցիաների հետ հաղորդակցական մոտեցման փոխկապակցվածության պայմանով:

Հետազոտությունն իրականացվել է մի քանի փուլերով (1999 թ.-ից մինչև 2020 թ.):

Հեղինակը հիմնավորում է ընտրված թեմայի գիտական նորույթը, որը կայանում է ապագա մասնագետի հաղորդակցական կոմպետենցիայի բովանդակության սահմանման, ռուսաց լեզվի ուսուցման գործընթացի գործառնության-ոճաբանական կողմի արդիականացման, աուտենտիկ նյութերի հիման վրա երկրորդային տեքստ կազմելու հմտությունների զարգացման միջոցով ուսուցման գործընթացի հաղորդակցական բաղադրիչի ուժեղացման մեջ:

Առաջին գլխում՝ «Մասնագիտական կողմնորոշմամբ օտարալեզու հաղորդակցական կոմպետենցիան՝ որպես հանքագործ ճարտարագետի մասնագիտական պատրաստվածության անբաժան բաղադրիչ», հեղինակն անդրադառնում է ուսանողների խոսքային (հաղորդակցական) կոմպետենցիայի



ձևավորման կազմակերպչական-մանկավարժական պայմանների դիտարկմանը՝ դրանով իսկ մշակելով իր հետազոտության տեսական հիմքը:

Երկրորդ գլխում՝ «Հայաստանի տեխնիկական ԲՈՒՀ-ում ռուսերենի՝ որպես օտար լեզվի ուսուցման գործընթացի ոճական ասպեկտավորում», ներկայացված են խոսքային (հաղորդակցական) կոմպետենցիայի ձևավորման հոգեբանա-լեզվաբանական հիմքերը: Ատենախոսն առանձնացնում է ռուսաց լեզվի ուսուցման գործառնական ուղղվածությունը՝ արդարացիորեն նշելով, որ «... խոսքի զիտական ոճի բառապաշարային մակարդակը ոչ միայն մեծապես հետաքրքրաշարժ է ուսումնասիրության համար, այլև միաժամանակ առաջ է քաշում ամենամեծ դժվարությունները տեխնիկական ԲՈՒՀ-ում ռուսերենը՝ որպես օտար լեզու ուսուցանելու համար» (Էջ 41-42):

Երրորդ գլուխը՝ «Օտարալեզու մասնագիտական հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորման հնարքներ», նվիրված է տեխնիկական ԲՈՒՀ-ում ռուսաց լեզվի ուսուցման գործընթացի կատարելագործման հարցերին: Հիրավի, այս գլուխը ամենամեծ հետաքրքրությունն է ներկայացնում մեթոդիստների համար, քանի որ այստեղ Զ.Ա. Մարգարյանը մանրամասնորեն մշակում է այնպիսի հնարքներ, ինչպիսիք են դասաժամի բովանդակությունը և կառուցվածքը, ուսումնական տեքստերի ընտրության հիմնական սկզբունքները, ռուսաց լեզվով կապակցված խոսքի զարգացման համար վարժությունների համակարգը, խաղային գործունեությունը, առարկայական-ճանաչողական գործողությունները՝ որպես ուսանողների ռուսաց լեզվով խոսքի բնական մոտիվացիայի անալոգներ, տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները՝ որպես ուսումնական գործընթացի կատարելագործման և օպտիմալացման կարևորագույն մաս: Փաստորեն, դրանք իրենցից ներկայացնում են կիրառման համար պատրաստի գրագետ ուղեցույցներ:

Հայցորդի հետևությունները և եզրակացությունները համոզիչ են հնչում: Առաջարկները հիմնավորված են և արդիական: Առաջին հերթին, դրանք հիմնված են

մեթոդիկ, լեզվաբանական, մանկավարժական և հոգեբանական գրականության (ժամանակակից հեղինակների աշխատանքներ, դասականների աշխատություններ և համացանցային ռեսուրսներ) խորը և բազմակողմանի վերլուծության վրա: Սակայն դա դեռ հետազոտության տեսական հիմքն է: Հաջորդիվ, հեղինակն առաջարկում է տեխնիկական ԲՈՒՀ-երի ուսանողների խոսքային կոմպետենցիայի ձևավորման սեփական տեսլականը և փորձնականորեն ստուգված հետաքրքիր հեղինակային մեթոդական համակարգ:

Ատենախոսության մեջ լուծում է տրված մի շարք լեզվաբանական-դիդակտիկական խնդիրներին, որոնք կապված են ոռուսաց` որպես օտար լեզվի դասերին մասնագիտական լեզվի ուսուցման գործընթացի մեթոդաբանական գործիքակազմի ընդլայնման հետ: Ատենախոսության մեջ հեղինակի կողմից արված հետևությունները, ներկայացված էմպիրիկ նյութը, ինչպես նաև մեթոդական ուղեցույցները իրենցից մեծ գործնական արժեք են ներկայացնում: Տվյալ հետազոտության նշանակությունը կայանում է նաև ստացված արդյունքների հավաստիության և հուսալիության մեջ, ինչն ապահովված է հետազոտության ծավալով (ընդհանուր տեքստի 189 էջ), ոչ ավանդական տեխնոլոգիաների կիրառմամբ փորձարարական ուսուցման գործընթացում տեսական դրույթների փորձարկմամբ և իրականացմամբ:

Ատենախոսության մեջ ներկայացված աղյուսակները, դիագրամները և սխեմաները պատկերավոր կերպով արտացոլում են հայցորդի գործնական աշխատանքի արդյունքները: Դրանք համոզիչ են և հեղինակի կողմից փաստարկված:

Բարձր գնահատելով կատարված աշխատանքը` անհրաժեշտ ենք համարում ուշադրություն դարձնել որոշ թերությունների վրա, այն է`

1. Գրականության ցանկը մեզ թվում է փոքր-ինչ հնացած: Հեղինակը, դասականների աշխատությունների հետ մեկտեղ, կարող էր ներգրավել ժամանակակից գիտական և գիտամեթոդական աշխատանքներ, այդ թվում և հայ մեթոդիստ-ոռուսագետների հետազոտությունները, մասնավորապես` Բ.Ս.

Եսաջանյանի մեթոդական մշակումները, ինչպես նաև չեն օգտագործվել նեղ մասնագիտական ռուս-հայերեն բառարաններ, օրինակ՝ «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան»-ը (Ջ.Ա. Հացագործյան, Ա.Հ. Դարբինյան, Ն.Գ. Հովումյան, Գ.Հ. Սրվանձոյան) (Երևան, 1988):

2. Աշխատանքում առատորեն ներկայացված են հավելվածները: Միգուցե, արժեր դիտարկել դրանց միավորման հնարավորությունը, քանի որ հավելվածների բովանդակությունը թույլ է տալիս դա անել:

3. Ատենախոսության էջերում ցանկալի կլիներ տեսնել մեկ դասաժամի մշակում, որը կհանդիսանար հեղինակի մեթոդական առաջարկների պատկերազարդումը: Բացի այդ, ատենախոսին խորհուրդ կտայինք համակարգել ատենախոսության մեջ առկա մեծաքանակ արտադրողական և վերարտադրական բնույթի վարժությունները, որոնք ուղղված են մասնագիտական խոսքային կոմպետենցիայի զարգացմանը:

4. Ատենախոսության մեջ հայտնաբերվել էին տեխնիկական բնույթի վրիպակներ, որոնք ցանկալի է շտկել:

Նշված անճշտությունները չեն նսեմացնում գրախոսվող աշխատանքի արժանիքները: Աշխատանքը գրված է լավ գիտական մակարդակով և բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի՝ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող բոլոր պահանջներին:

Սեղմագիրը արտացոլում է աշխատանքի հիմնական բովանդակությունը, հրապարակված հոդվածները համապատասխանում են հետազոտության թեմային:

Գրախոսվող ատենախոսության տեսական և գործնական նշանակությունն ակնհայտ է: Կարելի է համարել, որ աշխատանքի ընթացքում հայցորդը լուծում է տվել առաջադրված խնդիրներին և հասել սահմանված նպատակին:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ համարում ենք, որ Քրիստինա Արայի Մարգարյանն արժանի է «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (ռուսաց լեզու)» 13.00.02 մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:



## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Քրիստինա Արայի Մարգարյանի «Ուսանողների մասնագիտական խոսքային կոմպետենցիայի ձևավորումը տեխնիկական ԲՈՒՀ-ում ռուսերենի ուսուցման գործընթացում» թեմայով ատենախոսությունը քննարկվել է 2023թ. մայիսի 18-ին Հայ-Ռուսական համալսարանի ռուսաց լեզվի և մասնագիտական հաղորդակցության ամբիոնի նիստում:

Քննարկմանը մասնակցել են ամբիոնի վարիչ, Բ.Գ.Թ., դոցենտ, պրոֆեսորի պ/կ Կ.Ս. Հակոբյանը, դոցենտ, Բ.Գ.Թ., դոցենտ Ա.Գ. Մարգարյանը, դոցենտ, մ.գ.թ., Վ.Հ. Գրիգորյանը, դոցենտ, մ.գ.թ., դոցենտ Գ.Հ. Վահրամյանը, դասախոս, մ.գ.թ. Ս.Ա. Քոչարյանը, դոցենտ, Բ.Գ.Թ., դոցենտ Լ.Վ. Պետրոսյանը, պրոֆեսորի պ/կ, Բ.Գ.Թ., դոցենտ Տ.Ա. Հովհաննիսյանը, դոցենտ, Բ.Գ.Թ., դոցենտ Ն.Գ. Տոգոշվիլին, դոցենտ, Բ.Գ.Թ., Ա.Ս. Դերցյանը, ավագ դասախոս Բ.Գ.Թ. Ս.Ա. Թունյանը, ավագ դասախոս Ա.Ս. Հակոբյանը, ավագ դասախոս Կ.Բ. Գրիգորյանը, դասախոս Լ.Ս. Հակոբյանը, ամբիոնի մենեջեր Ա.Կ. Տերչանյանը:

Քննարկման ընթացքում հանգեցին հետևյալ եզրակացությանը.

Քրիստինա Արայի Մարգարյանի հոդվածները և սեղմագիրն արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Գրախոսվող աշխատանքն իրենից ներկայացնում է մեծ տեսական և գործնական նշանակություն ունեցող ավարտուն, լուրջ, հետաքրքիր և պահանջված գիտական հետազոտություն:

Տվյալ աշխատանքը բավարարում է ՀՀ ԲՈՒՀ-ի թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող բոլոր պահանջներին, իսկ Քրիստինա Արայի Մարգարյանն արժանի է 13.00.02 – «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ռուսաց լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Նիստի նախագահ՝  
ՀՌՀ Ռուսաց լեզվի  
և մասնագիտական  
հաղորդակցության ամբիոնի վարիչ՝  
բ.գ.թ., դոցենտ, պրոֆեսորի պ/կ՝

Վ.Ս. Հակոբյան

Գրախոսողներ.  
ՀՌՀ Ռուսաց լեզվի  
և մասնագիտական  
հաղորդակցության ամբիոնի դոցենտ,  
մ.գ.թ., դոցենտ

Գ. Հ. Վահրամյան

ՀՌՀ Ռուսաց լեզվի  
և մասնագիտական  
հաղորդակցության ամբիոնի դոցենտ,  
մ.գ.թ.

Վ.Հ. Գրիգորյան

Նիստի քարտուղար,  
ՀՌՀ Ռուսաց լեզվի և  
մասնագիտական հաղորդակցման  
ամբիոնի մենեջեր, մ.գ.թ.

Ա.Կ. Տերչանյան

Հավաստիացնում եմ՝  
ՀՌՀ Գիտական քարտուղար  
բ.գ.թ.



Ռ.Ս. Կասարպարովա